ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

15-ը մայիսի 2019թ.
ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման (օդափոխության համակարգերի նորոգման) աշխատանքների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	*Մասնակիցների անվանում*
1	«Աշխատանք» ՍՊԸ
2	«Աբակ» ՍՊԸ
3	«Գլենսեր» ՍՊԸ
4	«Թերմոկոն» ՍՊԸ
5	«Վաելկոն» ՍՊԸ
6	Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի
7	Ա/Ձ Վլադիկ Սահակյան

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին. տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 22.05.2019թ., ժամը 17:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- «Վաելկոն» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում՝ գնային առաջարկում /Հավելված 4/ «Աշխատանքի անվանումը» սյունակում նշված անվանումը /Տանիքների վերանորոգման աշխատանքներ/ չի համապատասխանում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված անվանը /Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման (օդափոխության համակարգերի նորոգման) աշխատանքներին/:
- «Թերմոկոն» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում՝ գնային առաջարկում /Հավելված 4/ «Աշխատանքի անվանումը» սյունակում բացակայում է «Գնման առարկայի» անվանումը /Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման (օդափոխության համակարգերի նորոգման) աշխատանքներ/՝ գնման առարկայի անվանման փոխարեն նշված է N1:

ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոնշյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշեց մերժել «Վաելկոն» ՍՊԸ և «Թերմոկոն» ՍՊԸ հայտերը /գնային առաջարկները ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Չափաբաժին N 1՝ Օդափոխության համակարգերի նորոգման աշխատանքներ.

Նախահաշվային գին՝ 5 919 975 ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանում	Առաջարկած գին /ՀՀ դրամ/		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	«Աշխատանք» ՍՊԸ	4 666 000	933 200	5 599 200
2	«Աբակ» ՍՊԸ	5 416 000	1 083 200	6 499 200
3	«Գլենսեր» ՍՊԸ	5 541 096	0	5 541 096
4	Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի	5 900 000	0	5 900 000
5	Ա/Ձ Վլադիկ Սահակյան	29 166 665	5 833 333	34 999 998
6	«Թերմոկոն» ՍՊԸ	7 274 600	1 454 920	8 729 520
7	«Վաելկոն» ՍՊԸ	5 873 420	1 174 684	7 048 104

Ներկայացված են ծավալաթերթով նախատեսված աշխատանքների (առանձին փողերի) համար մասնակիցների կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Համաձայն ներկայացված գնային առաջարկների՝ մասնակիցներից՝ «Աշխատանք» ՍՊԸ-ն, «Աբակ» ՍՊԸ-ն, Ա/Ձ Վլադիկ Սահակյան-ն, «Թերմոկոն» ՍՊԸ-ն և «Վաելկոն» ՍՊԸ-ն աշխատում են ԱԱՀ-ով, իսկ «Գլենսեր» ՍՊԸ-ն և Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի-ն՝ առանց ԱԱՀ:

3.3 Սույն մրցույթի շրջանակներում գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 22.05.2019թ.՝ էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա բաց մրցույթում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Աշխատանք» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղերը զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստը անցման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք հրավերում նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 12^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան